

ԱՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ
Վազգեն Առաջինին
սուրբ խոնարհումով

Ամեն շաբաթ կամ կիրակի
Ես ուխտի եմ գալիս քեզ,
Սրբագրում ես դու հոգիս
Հաղորդումով մի անտես:

Մայր տաճարի սուրբ գավիթում
Խոնարհվում եմ Մեծերիդ,
Խրիմյանի օրհնանքն առած
Վառում մոմերն հավատիս:

Քո մյուռոնի և քո խնկի
Անուշ բույրից արբեցած
Սուրբ աղոթքով իջած ծունկի
Աղերսում եմ քեզ, Աստված:

Զորություն տուր հայկյան ցեղիս,
Միաբանում մի վերին,
Բավ է՝ չարը շեղի ուղիս,
Մոլորեցնի հոտը իմ:

Տե՛ր, խաչվածիս էլ մի խաչիր,
Մի՛ խլիր լույսն իմ աչաց,

Գաբրիելի սուր տուր քաջիս
Եվ թևերը հրեշտակաց:

Մաշտոցապաշտ, անմեղ հոգիս
Թող շարական, տաղեր հյուսի,
Աստվածամոր պատկերն աչքիս
Քրիստոսի խաղը տեսնի...

Խաչ, գավազան և թագ լուսե,
Զարդարեք միշտ Վեհափառիս,
Էջմիածի՛ն, ուխտդ վսեմ
Զորավիգ է՝ «Եկայք առ իս...»:

19.5.1990
Ս. Էջմիածին